Ստեփանակերտի քաղաքապետ
Սուրեն Գրիգորյանին

Դիմող՝ «Հետք» թերթի
թղթակից Հայկ Ղազարյան Գրիգորիի

/ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 23/29
հեռ. 097 23 04 35
էլ. փոստ՝ hghazaryan88@gmail.com/

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն Գրիգորյան,

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները. վերջին հինգ տարիներին Ստեփանակերտի քաղաքապետարանի մանկապարտեզներին սնունդ ու կահույք մատակարարող կազմակերպությունների ու նրանց հատկացված գումարների ցանկը:

«Տեղեկատվության ազատության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Հայկ Ղազարյան _____

03/08/2018